1891 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13 (25), ԿԻՐԱԿԻ

№ 33—ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 33

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13 (25) 1891

Տարեկան գինն է 10 ռուբլի կէս տարուանը 6 ռուբլի։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзагапкъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagank".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամը (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Ստեփան և Մարտիրոս Տէր—Մկրտչեանները ցաւօք սրտի յայտնում են իւրեանց մօր՝ ԵՂԻՍԱԲԷԹ ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆԻ մահը, վերին—Ագուլիսում, ուստի խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել կիրակէ, 13 հոկտեմբերի, Մողնու Սուրբ Գէորգ եկեղեցին, ժամի 11-ին, հանգուցեալի հոգեհանգստին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայկական Թատրոն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ — Ամենապատիւ Խորէն Պատրիարքի «Կենցաղ եկեղեցականաց» գիրքը։ Ռուսաստ. սովի ենթարկուած նահանգների դպրոցները։ Ստեփ. Ղամբարեանի նուէրը։ Եթովպաս անուն կաթոլիկ քահանան։ Մի հայ քահանայի սպանումը։ Վաշխառութիւն։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ։ — Հայկական դրամագիտութիւն։ Աստուածաշունչը շիթ վայերէն։ Դօն-Պետրո և հին եբրայերէնը։

ՌՈԴՈՍՏՕՅԻ, ԱՂԻՔՍԱՆԴՐԵՏԻ ԵՒ ԲԷՅՐՈՒԹԻ ՀԱՅԵՐԸ.

ՖԵԼԻԵՏՕՆ։ «Կենցաղ եկեղեցականաց». —Ուսումնասիրութիւն։ Գեղեցիկ Նարգիսը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ։

ԶԱՆԱԶԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հոկտեմբերի 10-ի

«ՔՈՅՐ ԹԵՐԵԶԱ»

Ներկայացումը։

1882 թուի ապրիլի 4-ին հայ դերասանական խումբը, որ այն ժամանակ ևս «մշտական» էր կոչվում, բայց որ նոյն թուականը չ'բոլորած, յաւիտենականութեան մէջ անհետացաւ՝ ղեկավարների անհոգութեան շնորհիւ, ներկայացրեց «Քոյր Թերեզա» չորս գործողութեամբ դրաման։ Այդ երեկոյ խաղում էին Ադամեան, տ. Հրաչեայ - Կարա, օր. Վերգինէ Կարակաշեան, պ. Մնակեան, Մարի-Նուարդ... միով բանիւ հայ թատրոնի բոլոր մեծ ու փոքր աստղերը։

Եւ ահա համարեա թէ տաս տարի անցած,—երբ անագորոյն մահը կորզել է աշխարհից մեծ դերասանին, երբ տիկին Հրաչեան հրաժարուել է բեմից՝ նուիրելով իրեն իր զաւակների կրթութեան, երբ օր. Կարակաշեան յոգնելով բեմի վրայ էնժենիւներ ներկայացնելուց, այժմ նախադասել է կեանքի մէջ լուրջ հայեացքների հետևել, երբ պ. Մնակեանն անձնատուր է եղել տաճկական «թատրոնական գաղափարի» ծառայելուն, երբ խեղճուկ Մարի-Նուարդը վախճանուել է—այժմեան խումբը, որ մշտական դառնալու շատ տարրեր է պարունակում իր մէջ, նոյն գրուածքը ներկայացրեց հոկտեմբերի 10-ին։

Ա՛խ, մենք յիշում ենք այն երեկոն. որքա՜ն գեղեցիկ էր տիկին Հրաչեան, որ այնպիսի հազուագիւտ բեմական ձիրքեր էր միացնում իր մէջ. որքա՜ն գրաւիչ էր օր. Կարակաշեանը. նորա ամեն մի քայլն այնպէս մտածուած էր, որ հանդիսականը այն դրամատիքական դերում հազիւ կարող էր ճանաչել մի դերասանուհու, որ սովորաբար շատ յաջող ingenue-ի դերեր էր կատարում։ Օրիորդին առաջին անգամ տեսնողն իրաւամբ կարող էր մի դրամատիքական դերասանուհու ապագայ գուշակել նորան։ Մեր ականջումն է տակաւին այն սրտի խորքից բղխած աղաղակը, որով Ադամեանը բողոքեց իր սիրեցեալ հարսնացուի մենաստանում փակելու դէմ...։

Բայց, աւա՜ղ, մեռեալներին անկարելի է յարութիւն տալ, իսկ մոլորեալ ոչխարներին դժուար է դարձնել փարախը։ Պէտք է ուրեմն այն ոյժերով գործել, որ ունինք. պարտաքի ճիշդ կատարելովը փոխարինենք այն, ինչ որ ժամանակաւորապէս պակասում է մեզ, և երբէք չ'վհատուենք։

—

«Քոյր Թերեզա» կամ «Մենաստանում» մի մելօդրամ է, որ թէև լի է անբնական դրութիւններով, բայց մի քանի հետաքրքիր տիպեր է ներկայացնում, բեմական մեծ արժանաւորութիւններ ունի, տեսարանները երևակայութեան վրայ շլացուցիչ ազդեցութիւն կարող են ունենալ. այս է պատճառը որ դա համակրութեամբ է ընդունվում հասարակութեան մեծամասնութիւնից և որ շատ յայտնի դերասանուհիք փորձում են իրենց ոյժերը «Թերեզայի» դերում։

Թերեզայի դերը կատարում էր տիկին Սիրանոյշը։

Թերեզան ներկայանում է մեզ երեք դրութեամբ. նախ՝ իբրև մի երևելի կուսանոցի մայրապետ, երկրորդ իբրև անսահման գթով սիրող մայր և վերջապէս իբրև գայթակղուած կին։ Տիկին Սիրանոյշը նուրբ կերպիւ ուսումնասիրել էր իր դերը և մենք մի այնպիսի մայր տեսանք մեր առաջ, որ կենդանի ապացոյց էր այն խօսքի, թէ «մօր սիրտը սիրոյ ամենակատարեալ ստեղծուածքըն է։» Ցաւում ենք, որ ստիպուած ենք ասել՝ իբրև մայրապետ տիպ նա աւելի թոյլ էր։ Մայրապետի աստիճանին հասնելը և այն խրախճների կուսանոցի՝ գլուխն խնդիր չէ. որքան տարի պէտք է գործ դնէր նա, որպէս զի իբրև պարզ կոյս մտնելով վանքը՝ այդ բարձր կոչման արժանանար. նա շատ խոչընդոտների պէտք է յաղթէր, նոյն իսկ իբրև մայրապետ նա զանազան մեքենայութիւններով և լրտեսներով է շրջապատուած։ Նա պէտք է զգայ իր մէջ երկար ժամանակ ճնշուած մայրական սէրը, պէտք է իր զգացմունքների տէր լինի և երբէք բոլորովին թոյլ չ'երևայ, նորա ներքին մաքառումները հազիւ միայն նշմարելի են շրջապատողներին։ Իսկ տիկին Սիրանոյշը փափշտակուած մօր դերովը, պահանջածից շատ աւելի յաճախ ցոյց էր տալիս մի աչքի ընկնող թուլութիւն, յուսահատութիւն իր թշնամիների ներկայութեամբ։ Նոյն իսկ դերի դժուարութիւնը հեղինակի գաղափարով մէկ զգացմունքից դէպի միւսն անցնելու արագութեան մէջ է։ Իբրև գայթակղած կին՝ տ. Սիրանոյշը մեծ յաջողութիւն ունեցաւ այն տեսիլների մէջ, ուր նա յայտնում է իր ատելութիւնը, արհամարհանքը դէպի այն անարժանը, որ նորա դժբաղդութեանց բոլոր պատճառն է եղել և որ այժմ ուզում է խանգարել իր դստեր երջանկութիւնը, որի վրայ կենդրոնացած է մօր բոլոր սէրն ու յոյսը։

Այո, պէտք այդ երեկոյեան յաջողութիւնը պէտք է համարեմ թէ ամբողջովին վերագրել տիկին Սիրանոյշին։

Տիկին Մելիքեանը կատարում էր Թերեզայի դստեր դերը. Ի՞նչ երջանիկ օրիորդ, որ այդպիսի կատարեալ մայր ունէր. «մայրը տես աղջիկն առ», ասում է առածը։ Բայց այդ օրը աղջիկը իր մօրից օրինակ չէր առել, նա չէր ուսումնասիրել իր դերը և կարծես զգալով, որ իր պարտաւորութիւնը չէ կատարել, լալկան ձայնով էր խօսում բոլոր ժամանակ։ Տասը տարի առաջ խօսելով «Քոյր Թերեզայի» մասին մենք գրել էինք հետևեալը.

«Այս ողբերգութիւնն այնպիսի արտաքին պայմաններ ունի, որոնց ճիշդ կատարելն անհրաժեշտ է, որպէս զի այն, ինչ որ ժողովրդի վրայ մի կրօնական տպաւորութիւն պէտք է գործէ, բեմական միջոցների սղութեան պատճառով հեգնելու առիթ չտայ։ Երրորդ գործողութեան բեմը մի կաթոլիկ եկեղեցու ներքնակողմն է ներկայացնում, ուր մի գեղեցիկ, անարատ, կեանքի համար ստեղծուած օրիորդ (Գուլիելմինա) ակամայ պէտք է կոյս ձեռնադրուի և ահա բեմը լցնում են միաբանուհիները, որպէս զի կատարուի մի հանդիսաւոր ծիսակատարութիւն. ապրիլի 4-ի ներկայացման, երբ կոյսերը վառած մոմերը ձեռքին, զոյգ-զոյգ մտնում էին եկեղեցի, հանդիսականների մէջ յանկարծ ծիծաղ լսուեցաւ. այդ ծիծաղը պատճառեցին այն սօլդատները, որոնց կոյսի շորեր հագցնելով բեմ էին դուրս բերել։ Խեղճ հեղինակի մտքովն անգամ չէ անցել մի այդպիսի տեսարան ներկայացնել, որ գուցէ նոյն իսկ Օֆէնբախի օպէրետներում անտեղի համարուէր։ Վերջապէս մեր մարդկային զգացմունքը վիրաւորվում է տեսնելով թէ ինչպէս՝ երբ Գուլիելմինան (օր. Վ. Կարակաշեանը) նոյն իսկ բեմի վրայ իր հարսանեաց զգեստը փոխում է կոյսի շորեր հագնելու, նորան կոյս—սօլդատներ են շրջապատում»։

Ցաւում ենք որ համարեա թէ նոյնը պէտք է կրկնենք այժմ, որովհետև այս անգամ ծիսակատարութեան՝ բեմ դուրս եկած կոյսերի մէջ թէև ռուս սօլդատներ չ'կային, բայց դորա փոխարէն հայ երիտասարդութիւնը կոյսերի թւում երկու երեք ներկայացուցիչ ունէր։ Հաւատացնում եմ ձեզ, ընթերցող, որ այս ծիծաղելի չէ. մի՞թէ եթէ կինը նուիրում է իրեն դերասանական ասպարէզի, այդ նշանակում է որ նա դադարում է կին լինելուց։

Պ. Պետրոսեանի խաղի մէջ այդ օրը կրակ չ'կար, թէև նա իր դերի արտաքին պայմանները ինչպէս միշտ լաւ կատարեց։ Բայց քիչ էր մնում մոռանայինք յիշել որ այս պատուական դերասանին այդ երեկոյ մի փոքրիկ փորձանք պատահեց։ Պ. Պետրոսեանը պէտք է արտասանէր «կամայ ակամայ» բառերը, բայց նա նախ «ակամայ» խօսքն ասաց և ապա «կամայ» — «ակամայ կամայ» և առանց շունչ քաշելու ուղղեց, ասելով «կամայ ակամայ». այնպէս որ խօսքերը հետևեալ շուտասելուկի ձև ստացան՝ «ակամայ կամայ կամայ ակամայ»։ Ամեն մարդու կարող է պատահել ակամայ սխալ գործել, բայց բեմի վրայ երբէք չպէտք է ուղղել կամայ ակամայ գործած սխալը։

Պ. Թումեանը համաձայնել էր մի շատ փոքր դեր ընդունել, որ մեծ պատիւ է բերում նորան։ Երբ խումբը փոքր է, այդ բաները կարող են պատահել և պ. Թումեանը ապացուցեց դորանով, որ կեղծ ինքնասիրութիւնը շատ հեռու է իրանից։

Բաւականին լաւ կատարեցին իրենց դերերը տ. տ. Զաբելը, Փառանձեմը և պ. Աբելեանը։

Մինչև որ պ. Ադայեանցը չհամոզուի, որ ինքը նոյնքան նմանութիւն ունի Ադամեանի հետ, որքան մի փոքրիկ աղի կտորը ադամանդի հետ, նա երբէք մի քայլ յառաջադիմութիւն չի անիլ։

Ան—ն»ք

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս օրերս Կ. Պօլսից ստացանք Ամենապատիւ Խորէն Պատրիարքի յօրինած «Կենցաղ եկեղեցականաց» գիրքը։ Մարդ մի հոգեկան վայելչութիւն է զգում կարդալով այս պատուական աշխատութիւնը, ուր Աստուծոյ պաշտօնեան ցոյց է տալիս այն շաւիղը, որով պէտք է ընթանան հոգևորականները՝ իրենց վսեմ կոչման համապատասխանելու և ժողովրդին դէպի առաջին կեանք առաջնորդելու, որ ամեն յառաջդիմութեան հիմքն է։

Գիրքը բաղկացած է 212 էջից և բովանդակում է հետևեալ գլուխները.

Կոչումն եկեղեցականի։
Վսեմութիւն կարգին։
Համեստութիւն քահանայի։
Հեզութիւն քահանայի։
Կենցաղավարութիւն։
Ուսումնասիրութիւն։
Ժողովրդասիրութիւն։
Նախանձայուզութիւն։
Աշխարհահրաժարութիւն։
Կարգապահութիւն։

Առաջ ենք բերում այն յառաջաբանը, որով Ամենապատիւ Պատրիարքը զարդարել է իր գրքի ճակատը։

«Բազմադրեայ և ծանրակիր պաշտամանս սուղ ժամանակէն որքան պարապ կարացի գտնել, գործածեցի այս համառօտ գրուածիս։ Նպատակս է խրատել իմ հոգեկիր եղբայրներս և զարթուցանել ի մեզ՝ ի հոգևորականս զհոգի կոչման հովուութեան այնպիսի վարքով, որ համաձայնի վսեմութեան, սրբութեան և ահաւորութեան հոգևոր պաշտաման։ Մեծ հմտութեամբ գրուածք մը չէ, սակայն պարտաւորութիւններ կը յիշեցունէ որ նոր չեն, այլ հիմնեալ են Աւետարանի մաքուր զգացմանց վրայ, անկարելի ալ չեն, այլ եկեղեցւոյ նըշանաւոր պաշտօնէից առաքինի կենցաղավարութենէն բղխած անհրաժեշտ պայմաններ են։

Թէպէտև ոչ նուազ քան զամենեսին, և ես ինքն վարակեալ եմ բազում թերութեամբք պաշտաման,

ՖԵԼԻԵՏՕՆ

«ԿԵՆՑԱՂ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ»
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

—

Հարկ կա՞յ արդեօք ասել թէ ուսումն և գիտութիւնն անհերքելի կարևորութիւններ են հովուին կամ քահանային։ Եկեղեցւոյ մէջ կրօնք պահել և մշտնջենաւորել սոցա պարտքն է. եկեղեցին իւր աւանդութեանց պահպանումն սոցանէ կ'սպասէ. եկեղեցին պաշտօն տուեր է ինքեանց ջանալ խափանել զհեղեղ մոլութեանց. չ'թողուլ որ ուղղափառ վարդապետութեան անարատութիւն եղծանի, աշխարհի բարուց ապականիչ սկզբունք Աւետարանի սկզբանց վրայ զօրանան, այլ ինչպէս սկսան ի ծագմանէ անտի քրիստոնէութեան՝ եթէ ըստ հաւատոյ և եթէ ըստ բարոյականի՝ անփոփոխ նոյնութեամբ շարունակեն։

Հովուին կամ քահանային համար ուրեմն ուսման և գիտութեան սէրը պաշտօնական պիտոյք մի է. սոքա են լոյս աշխարհի, սոքա են ակն մարմնոյն եկեղեցւոյ. եթէ այս ակն խաւար լինի, բոլոր մարմին ի խաւարի է։ Եկեղեցին մեզ վրայ ձեռք դնելու ատեն սաստ. գնացէք և ուսուցէք, դուք էք նոր կտակին տապանակը, օրինաց և պատուիրանաց կրողը։ Որովհետև զայս ուսուցանելու կոչումն ունինք, առաւել ևս պէտք է որ մենք ուսեալ լինիմք. տգէտ և անլոյս հովիւն և քահանայն կոյրք են՝ կուրաց առաջնորդք, և երկոքին ի խորխորատ անկանին. տգէտ և անուսումն հովիւը իրաւունք չունի քահանայութեան փառաւոր անուան, մանաւանդ թէ նախատինք և բեռն է եկեղեցւոյ և նոյն իսկ աշխարհի։

Երբ քահանայութեան պաշտօնն ընդունելու կը ներկայանան ոմանք, ազգային կրօնական իշխանութիւնը կը փորձէ իմանալ նոցա կանխապատրաստ վիճակը. կը տեսնէ շատ անգամ նոցա վրայ յօժարութիւն ճոխ յընդունելութիւն պաշտաման՝ այլ գիտութեան չափազանց բացակայութիւն. բնականաբար չ'կրնար հաւատալ թէ իրական յօժարութիւն կը կենայ այն անձին վրայ, յորում յօժարութիւնը կեդանագործող միջոցն՝ այն է գիտութիւնը գերազանցապէս հեռի է յօժարողէն։ Կրօնական իշխանութիւնը հայելով ժամանակին և տեղական պարագայից դժբաղդ տրամադրութեան՝ քրիստոնէական սկզբնատարերաց հմտութիւն և Ս. Գրոց լեզուն հասկնալու չափ վարժութիւն որոց վրայ որ տեսնէ՝ կը յօժարի ընդունիլ ի կարգ քահանայութեան, և կը պատուիրէ որ ձեռնադրուելէն ետքն ալ գլխաւոր զբաղմունք ընեն ձեռնադրեալք կրասիրութիւն, Սուրբ Գրոց վերծանութիւն և եկեղեցւոյ կանոնական սովորութեանց հետաքրքրութիւն։ Տեսնելու արժանի բան է արդարև այն պատրաստականութիւն զոր ընծայելին ցոյց կուտայ, և հետևապէս կը ձեռնադրուի, բայց ահա քառասնօրեայ կրթութենէն դուրս գալուն պէս քիչ ժամանակէն՝ ոչ գիրք կ'առնէ ձեռքը, և ոչ գոնէ եկեղեցական արարողութեանց համար սահմանեալ սքանչելի և հոգեշունչ աղօթքները սերտելով և զգածուելով կը կարդայ։ Այս է ահա մեր հոգևորականաց արդի պատմութիւնը ըստ մեծի մասին։ Ժամանակ մը պաշտօնին անհրաժեշտ ծանօթութեանց մէջ յառաջադիմելու փափագ կ'ունենայ, բայց տակաւ անզգալապէս ծուլութիւն, զբաղմունք և մանաւանդ բազմաթիւ օրինակ անհոգ և տգէտ կարգակիցներուն կը թուլցունէ նախկին առաջադրութիւնը, կը կարծէ շատ բան գիտնալ, բայց ոչ միայն նոր ուսումն և նոր զարգացումն չէ առած, այլ և արդէն գիտցածն ալ մոռացեր է։ Ճշմարտութիւն է ըսածս, տա՛ր Աստուած՝ որ սխալ լինէր։ Քահանայ լինելուն կամ վեղար ի գլուխ դնելուն պէս՝ ուսմունք և գիտութիւն այլ ևս փափագելի չէն շատերուն համար. կարծես թէ իրենց տգիտութեան կամ չ'զարգացած մընալուն պատասխանատու չեն, ուստի ուր որ էին՝ անդէն սևեռեալ կը մնան։ Այս սովորական երևոյթի պատճառաւ գրեթէ առակ դարձած է թէ քահանայն տգէտ կ'ըլլայ, և դարձեալ՝ տգէտը քահանայ, և թէ քահանայն ուսանելու պէտք չունի, որ ընդհակառակն սուրբ պաշտօնին գործածութեան համար յամէն քայլափոխի գիտութիւն և լոյս իրենց կարևորութիւնը կ'աղաղակեն։ Եկեղեցին ծառայութիւն կը պահանջէ, և ծառայութեան բոլոր տեսակներն ալ առհասարակ կատարեալ գիտութիւն և մեծ լոյս կը պահանջեն։ Քահանայութիւնը սուրբ զինուորութիւն է. այս կարգի յատկացեալ զինուորը կրնա՞յ մէկգի թողուլ հաւատոյ վահանը, բանին Աստուծոյ և վարդապետութեան սուրբ ճիշդ այն պահուն՝ որ եկեղեցին ի պատերազմ կը կոչէ։ Քահանայ լինելուն պէս՝ եկեղեցւոյն իրեն ձեռքը տուած զէնքը, գիտութիւնը, ձեռքէն ձգելու է. ուսման ճաշակը մէկ կողմ թողելու է, գիրքն իբրև անպէտ կարասի ի բաց նետելու է։ Եւ ինչ կ'ըսեմ շատ կարգաւորներ գիրք ալ չունին. քանի՛ քահանայի տուն կամ վարդապետի խուց կրնաս Աստուածաշունչ Սուրբ Գիրք գտնել։ Հին ժամանակի երկիւղած և պաշտօնասէր կարգաւորք թէ և չէին հասկնար լեզուի քերականական կանոններ, սակայն այնքան շատ կը կարդային Սուրբ Գիրք և եկեղեցական պաշտամանց և աղօթից մատեաններ, որ լիապէս ընտելացած էին ազգային մատենագրական լեզուին, և քերթականութիւն խմբագրող հեղինակներէն աւելի կանոնաւոր և գեղեցիկ ոճով գրաբար կրնային գրել. իսկ այժմ, ո՛հ, Աստուածաշնչի լեզուով երես մը բան գրող կարգաւորներ մատի վրայ կը համրուին։

Չեմ ըսեր, որ միայն և միայն կարդայ, և ժողովրդեան պէտքը հոգալու կարևոր հարկը բոլորովին երեսի վրայ ձգէ։ Այլ կ'ըսեմ թէ ժողովրդեան պէտքը հոգալու համար պէտք է ամէն պարապոյ միջոց գիրք կարդալու գործածէ, գաղտնի զանձէ և հրապարակաւ ծախէ։ Ուսումնասէր լինելու են, բայց ոչ թէ գլուխնին տեղ մը քաշելով և ժողովրդեան աչքէն հեռանալով, այլ ի հարկին իմաստուն և օգտակար ներկայութեամբ երևելով, խօսելով և համոզելով։

Չեմ ըսեր որ այնպիսի ուսմանց կամ տեսական և հետաքրքրական անօգուտ հետազօտութեանց ետևէ լինին, որք բնաւ վերաբերութիւն չունին ժողովրդեան փրկութեան խնդրոյն հետ, զի այնպիսի պարապմունք ժամանակի կորուստ կը պատճառեն, և գողութիւն է ժողովրդեան յատկացեալ ժամն ու ժամանակը նորա պէտքէն դուրս ուրիշ բանի գործածելն։

Չեմ ըսեր որ եկեղեցական այնպիսի խոր և դժուարին խնդրոց հետաքրքրուին, որոց զբաղիլ և ժամանել շատ քիչերու տուեալ է, ոչ ամենեքին առաքեալք են և ոչ ամենեքին մարգարէք. և հոգւոյն Սրբոյ պարգևք իրենց աստիճաններն ունին. այլ կ'ըսեմ թէ ամէն կարգաւոր պէտք է ուսանի զՔրիստոս և զգիտութիւն խորհրդոց և ծիսից՝ որովք կը փառաւորուի եկեղեցին. ամենեքեան պէտք է գիտնան զզօրութիւն և զմեկնութիւն օրինաց և պատուիրանաց, որք հիմերն են եկեղեցւոյ զաւակաց կրթութեան, որպէս զի իրենց յանձնեալ հօտին այլ և այլ պիտոյից պատրաստութեան և հիւանդութեանց կարևոր դարմանին որպէս և որքան պիտոյ է՝ ժամանեն։

Եբրայական օրինաց քահանայք և դպիրք գիտնալով թէ ծանօթութիւն պատուիրանաց և հրամանաց Աստուծոյ ի քահանայութենէ անբաժանելի է, զգեստներուն վրայ և մանաւանդ լայն քղանցից բոլորներն զարդարանօք կը գրէին օրինաց յօդուածներ. «Լայնեն զդրօշմունս և երկայնեն զքղանցս հանդերձից իւրեանց». Մատթ. ԻԳ. 5։ Իրաւ է թէ այս ըրածնին փարիսեցիական և ծաղրելի կեղծաւորութիւն մ'էր, բայց կրնայ մեզ խրատ լինել թէ քահանայն ուր որ երթայ և շրջի, օրէնքը հետ տանելու է, ոչ թէ հանդերձներուն վրայ գրելով՝ այլ խորապէս սրտին և մտքին մէջ կրելով։ Նոյն իսկ հեթանոսութեան մէջ անգամ կռոց քուրմերը ուրիշ զբաղումն չունէին, այլ միայն իրենց դիցաբանական առասպելներն և զառացանքներն սերտել. կռատանց ներքին խորքը քաշուած կեանք մը կ'անցունէին, և միշտ պատրաստ ներկայութիւն մ'ունէին եկողին գացողին խորհուրդ և պատգամ հաղորդելու։ Ուրեմն մե՛ք՝ քահանայքս ճշմարիտ աստուածպաշտութեան՝ որչափ պարտաւոր եմք հիմնապէս ընդարձակօրէն ուսանիլ մի այնպիսի գերազանց և աստուածային կրօնք, զոր Յիսուս Քրիստոս բե-

սակայն այսու չ՚նուազիր այս խրատուց օգտակարութիւնն և կարեւորութիւնն, ըստ բանի Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ որ ասէ. «Մեք առաւել քան զամենեսեան ունիմք պէտս հոգւոց բժշկութեան. բայց՝ որպէս յիմար հիւանդի է, զիւրն առողջութեան դեղ՝ զոր մատուցանէ նմա ախտացեալ ոմն բժիշկ, ի բաց մերժել՝ տեսանելով զցաւս մարմնոյ նորա, նոյնպէս իմաստնոց է ոչ զըրնութեան բժշկին փոյթ ունել՝ թէ առողջ է կամ հիւանդ, այլ զդեղին քննել զօգտակարութիւն, եթէ առողջարար իցէ, թէ վնասակար»*):

Այս գրուածքով ժողովրդեան ևս կ՚ուզեմ խրատ տալ՝ թէ հոգևոր պաշտօնէից ընտրութեան մէջ որչափ զգուշութիւն պէտք է գործածել, միանգամայն իւր վրայ կարգեալ պաշտօնէին հետ որչափ որդիական ակնածութեամբ և կարևոր մեծարանօք պիտի վարուի, և հետզհետէ արժանի մշակաց բազմանալուն որչափ փափագանօք պիտի ջանայ և պաղատի Աստուծոյ, որպէս կը պատուիրէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ըսելով. «Աղաչեցէք զՏէր հնձոյ՝ զի հանցէ մշակս ի հունձս իւր». Մատթ. Թ. 38:

Ընթերցողներին մի ճաշակ տալու համար այս բազմախորհուրդ գրքի մասին, արտատպում ենք այսօր, իբրև ամենակարճը, մի գլուխ, որ կրում է «Ուսումնասիրութիւն» վերնագիրը:

* * *

Սովի ենթարկուած մի քանի նահանգներում մտադրութիւն կայ, ինչպէս հաղորդում է «Նովօե Վրեմիա», ծխական ուսումնարանաց տեսուչների ժողով կազմել, այն խնդիրը որոշելու համար, թէ ինչպէս պէտք է ապահովել այն ուսումնարանների գոյութիւնը, որոնք փակուելու վրայ են, որովհետև գիւղական հասարակութիւնները հրաժարվում են զըպրոցներին դրամական օժանդակութիւններ տալուց:

* * *

Մեզ հաղորդում են որ պ. Ստեփաննոս Ղամբարեանը 'ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնու նուիրել է 200 ռուբլի տեղւոյս հայուհեաց Բարեգործական Ընկերութեան և 100 ռուբլի քահանայից ապահովութեան գանձարանին: «Հարկ է արդեօք այս առիթով նկատել, աւելացնում է նամակագիրը, որ այսպիսի նուիրաբերութիւնն աւելի նպատակայարմար է քան մեր ընդունած «ճաշի» (մեռելահացի) կռապաշտական ժամանակներից մնացած սովորութիւնը, որ մինչև այժմ գոյութիւն ունի մեր թէ հարուստ և թէ չքաւոր հասարակութեան մէջ. առաջինները միանգամայն ապարդիւն կերպով վատնում են մեծամեծ գումարներ, իսկ երկրորդները պարտքի մէջ են ընկնում: Ժամանակ է վերջապէս հետևելու խելացի, բարի օրինակներին»:

* * *

Թիւրքիայի լրագիրները հաղորդում են հետևեալը. «Կ. Պօլսի ամբաստատանիչ ատեանը մի որոշմնագրով ազդարարել է ոստիկանութեան պաշտօնեաներին, որ ձեռբակալեն և եղեռնագործ ատենի բանտը յանձնեն Տիգրանակերտի հայ կաթոլիկ եկեղեցւոյ Էթօրպաս անունով քահանան, որ փախած է: Այս քահանան մին է այն անձերէն, որոնք ասկէ չորս տարի առաջ մի շաբաթ օր, նոյն եկեղեցւոյ մէջ, առաջնորդարանի դուռը կոտրելով գողցած էին հայ կաթոլիկների առաջնորդ Փերահեան Յովսէփ գերապայծառի դրամն ու գոյքերը»:

* * *

Թեհրանից հաղորդում են «Մշակին», որ նորերումս պարսիկները դարձեալ մի հայ քահանայ սպանեցին Սալմաստում: Թեհրան է ժամանել մի հայ-կաթոլիկ վարդապետ, որ աշխատում է Ֆրանսիական դեսպանի միջոցով ազատել այն բանտարկուած կաթոլիկ հայերին, որոնք մեղադրվում են Մեսրովբ վարդապետի սպանութեան համար:

* * *

«Արևելքի» մէջ կարդում ենք հետևեալ խորհրդածութիւնները վաշխառութեան մասին. մի ախտ՝ որի դէմ մաքառելու համար այժմ առանձին օրէնքների ծրագիր է մշակում նաև ռուսաց տէրութիւնը:

«Վաշխառութիւնը մեր երկրին տնտեսական մարմնոյն մեծ վէրքերէն մին է, ուստից ցայս վայր հոսած և խպառ կորած է շատ մը կենսական արիւն: Վաշխառութիւնը՝ ձեռք ձեռքի տուած պանդխտութեան հետ որ իւր հարազատ զաւակն է, անմարդացուցած է ամբողջ գաւառներ, փճացուցած է ամբողջ սերունդներ՝ դեռ ևս չծնած. զի երկրին կենսական ոյժերը տարագիր ընելով, թոյլ չէ տուած հասուննան, միանան, բեղմնաւորին և այն ընդարձակ տարածութիւնները լեցնեն ժիր գլուխներով և կորովի բազուկներով: Ընկերային և տնտեսական այսպիսի բազմադարեան աղէտ մը, ինչպէս է վաշխառութիւն, ոչ սոսկ օրինական տրամադրութեամբք կրնար վերնալ, զի ժողովրդեան տգէտ մեծամասնութիւնն օրինական զէնքերով գործելու բացարձակ անկարող է շատ անգամ, ոչ ալ սոսկ վարչական տնօրինութեամբք, որք թէև հիւանդութեան արտաքին ախտանիշերը կրնան պահ մը անհետացնել, բայց ախտն իսկ արմատախիլ չեն կրնար ընել, քանի որ չեն բառնար այն վիճակն յառաջ բերող հիմնական պատճառները: Վաշխառութեան գոյութեան պատճառը գաւառաց մէջ, ծովեզերքէն անդին, վարկի անկազմ անգոյ վիճակն է, յորում դրամագլուխը կը փնտռուի, բայց օրինաւոր պայմանաց մէջ ձեռք չբերուելով, ապօրինութեամբ կը գառածանի: Այսպիսի վիճակի մը դարմանը պետական տեսակ մը պանքա կրնար լինել, որ դիւրամատչելի պայմաններով դրամագլուխ ընծեռէր ժողովրդեան: Երկրագործական Պանքայի նախորդ տնօրէն Փօրթուգալ Միքայէլ Էֆէնտի, Կայսերական վեհանորոգիչ տրամադրութիւններէն ներշնչեալ, իւր պաշտօնավարութեան մէջ կարելին ըրաւ բարւոք կազմակերպութիւն մը տալու այն կարևորագոյն հաստատութեան, և իւր յաջորդ անշուշտ նովին հոգածութեամբ և ձեռնհասութեամբ պիտի գործէ: Երկրին ներսերն հաղորդակցութեանց դամ քան զգամ դիւրացման շնորհիւ աւելի սերտ առևտրական յարաբերութիւն կատարելով ծովեզերաց հետ, վարկի խնդիրն ևս հետզհետէ պիտի լուծուի անշուշտ: Եթէ ցաւալի է որ անցելոյն մէջ վաշխառուք կարևոր մասամբ մը հայ տարրին մէջէն բըխած են, հայ տարրին դարձեալ վերապահուած պէտք է համարինք միջնորդ լինել վարկի այս օրինաւոր կազմակերպութեան ի գաւառս՝ հաստատելով սեղանաւորական գործակալութիւններ, որք կանոնաւոր տոկոսներով դրամ փոխ տան ժողովրդեան, ապահովութեան ամեն պայմաններով շրջապատուելով, բայց զգուշանալով նախկին վաշխառուաց անվայել հընարքներէն: Յոյս մեծ ունինք թէ այսպիսի ձեռնարկներ ընդդ հայ սեղանաւորք չեն վնասեր, և ապագային մէջ մեծապէս կ՚օգտին ալ, քանի որ օրինաւոր վարկն յաջորդէ ապօրէն վարկին»:

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնը, ինչպէս հաղորդում է արտասահմանի լրագրերից մինը, դիմել է Փարիզի հայազգի հարուստներին խնդրելով որ նոցանից մէկը յանձն առնէ 1000 ֆրանկ նուիրելու հայկական դրամագիտութեան վերաբերեալ մի գրուածք հրատարակելու համար: Յայտնի է որ հանգուցեալ Կղեմէս վարդապետ Սիպիլեանը, որ իր մասնագիտութիւն էր արած հայ դրամագիտութիւնը, նուիրել է նոյն վանքին՝ ոսկեայ, արծաթեայ և պղնձեայ հայկական դրամների մի ժողովածու. արդ խնդիրը այս դրամների պատկերներն փորագրելու և պէտք եղած բացագրութիւններով մի գըրքոյկ հրատարակելու վրայ է: Միաբանութիւնը հաշիւ է արել որ 2000 ֆրանկ ծախս պէտք է գնայ այս գործի տպագրութեան վրայ. եթէ մի մարդ գտնուի, որ այդ գումարի կէսը՝ այն է 1000 ֆրանկ հատուցանի, այն ժամանակ միաբանութիւնը պարտաւորվում է նուիրողի անունով զարդարել գրքի ճակատը:

Մի նեգր քահանայ թարգմանել է Աստուածաշունչը շիթվայերէն, որով խօսում է Աֆրիկայի ժողովըրդի բաւականին նշանաւոր մասը և որ շատ բառեր ունի զուլուսների լեզուից առած: 239-րդ լեզուն է սա, որով թարգմանուած է մինչև այժմ Աստուածաշունչը:

Դօն-Պետրօ դ՚ Ալկանտարան — Բրազիլիայի նախկին կայսրը վաղուց արդէն վայելում է նշանաւոր արևելագէտի համբաւ: Ինչպէս հաղորդում է Athenaem-ը, նա այժմ ևս պարապում է իր սիրած առարկայով, ըղըլխաւորապէս նուիրելով իրեն հին եբրայերէնի ուսումնասիրութեան: Նորերումս Ավինիօնում նա մի գրուածք է հրատարակել «Poésies Hebraico-Provençales du Rituel Israëlite Comtadin» վերնագրով: Այս գիրքը բովանդակում է եբրայական բնագիրը և նորա ֆրանսիական թարգմանութիւնը՝ Դօն-Պեդրօյի ծանօթութիւններով հանդերձ:

ՌՈԴՈՍՏՕՅԻ, ԱԼԷՔՍԱՆԴՐԵՏԻ ԵՒ ԲԷՅՐՈՒԹԻ ՀԱՅԵՐԸ

(Քաղուածքներ «Արևելքի» թղթակցութիւններից)

—Մխիթարութեան գեղեցիկ առարկայ մի ևս կրնայ համարուիլ քաղաքիս հայուհեաց ընկերութեան մարդասիրական գործերն, որ հայ աղքատ աղջկանց դաստիարակութեան խնդրովք կը զբաղին, դաստիարակ, թուղթ, և այլն դասական պէտքերը կը հոգան. Հայուհեաց կազմութիւնն 1889 թուականին կը սկսի. Տ. Հմայեակ Սրբազանի պաշտօնավարութիւնէն, որպէս նաև Դպրոցասիրաց ընկերութիւնն, որ աղքատ տղայոց դըպրոցական պէտքերը կը հոգայ և շատ կարօտելոց հաղուստները կը շինէ: Հայուհեաց Գ. տարւոյ շրջանի բացման նախագահած է Տ. Հմայեակ Սրբազան և հիմնադիր անդամակցութեան պատիւ տրուած է հետևեալ եօթն տիկիններու, որ քաղաքիս ազնուական դասուն մայրերն են՝

Մ. Հեղինէ Տիկին Մալաքեան
Եղիսաբէթ » Փ. Ալեանաքեան
Հռիփսիմէ » Գ. Յակոբեան
Աղաւնի » Հ. Արուէնեան
Բրաբիոն » Հ. Թարաքճեան
Մարիամ » Կ. Մեհթերեան
Մ. Մելիք » Ուզունարտեան

Հայուհիք, ինչպէս նախընթաց տարւոյ մէջ ազգ. գերեզմանատան պատերը շինեցին, կը լսեմք թէ՝ այս տարի ևս Ս. Թադէոս եկեղեցւոյ՝ զարդուց, զգեստուց, կանթեղներու և այլ պակասները շինել որոշած են:

—Քաղաքիս համար գլխաւոր պակաս մին ալ ունինք. Ս. Խաչ թաղի վարժարանաց շինութիւնը, որ դեռ երեսի վրայ կը մնայ, և 250—300 աշակերտ տղայք մէկ քանի խեղճուկ սենեակներու մէջ՝ իրարու վրայ նըստած են, իսկ 120-է աւելի աղջիկները գետնայարկ մէկ սրահի մէջ: Ծնողաց և թաղեցւոց անտարբերութիւնն չափ չունի. քանի քանի անգամներ եկեղեցւոյ բեմէն վիճակիս Գեր. հովիւն յորդոր և խրատներ կ՚ուղղէ, բայց թէ լսելու ականջներ և թէ գործելու ձեռքեր կը պակսին: Այս անգամ վերջապէս ըլլալով նախընթաց կիրակի օր՝ Տ. Հմայեակ Սրբազան իր քարոզի մէջ յայտարարեց, թէ Բ. Դռնէն վերաշինութեան հրամանը ստանալուն՝ յառաջիկայ Մեծ Պահոց սկիզբն եկեղեցւոյն ունեցած մաս մը պատրաստի գումարովն և ժողովրդեան աշխատութեամբ ու օգնութեամբ պիտի ձեռնարկուի շինութեան:

—Իսկէնտէրուն կը գտնուի Միջերկրական ծովուն եզերքը, ճիշտ Իսոսի ծոցին բերանը, ըստ բարեգեան միջօրէի երկայնութեան 34°, իսկ լայնութեան 37° աստիճանաց վրայ: Աշխարհագրական նախնի բաժանմամբ կը պատկանէր Կիլիկիոյ վիճակին, բայց այժմ կը վերաբերի վարչականապէս Բերիոյ կամ Հալէպի կուսակալութեան և է տեղակալութիւն (գայմագամլըգ):

Սոյն քաղաք ներողացիք կ՚անուանեն Աղէքսանդրետ. Հայերը թարգմանաբար Աղէքսանդրիակ, իսկ Թուրքերն՝ Իսկէնտէրուն, ըստ որում կը կարծուի լինել յաղթական կոթողակերտ Յունաց հռչակաւոր աշխարհակալ Մեծին Աղէքսանդրի, շինուած Պարսից Դարեհ թագաւորին յաղթութենէն յետոյ: Իսկէնտէրուն որպէս զի զանազանուի Եգիպտոսի Իսկէնտէրիէէն կամ Աղէքսանդրիա քաղաքէն, սովորութիւն եղած է տեղացւոց յորջորջել զնա Պէյլէն Իսկէլէսի, մօտակայ համանուն հին քաղաքին անուամբ:

Իսկէնտէրուն շինուած է ծովեզերեայ հարթ և ցած դետնի վրայ, այնպէս որ ամբողջ քաղաքը ճահճային ջրերով պատած է, ուստի և տեղացիք չունին առողջ կեանք, օդակալը կլիմայ և դաւառային քաջառողջ կազմուածք, վասն որոյ օր ըստ օրէ փոխանակ յառաջանալու՝ կը յետադիմեն: Ժողովուրդք ձմրան, գարնան և աշնան կը բնակին մէջն, իսկ ամառը կը ցրուին յայլեր, անշուշտ ձգելով կարևոր նաւահանգիստ մը:

Քաղաքին ամբողջ բնակչաց թիւըն է 950 տուն. 100ը հայ, 80 թուրք, 500-ը Յոյն, 100-ը պապական և 200-ը Սագուկեցի կամ Փէլլահ: Բացի Սագուկեցիներէն, մնացեալ ամենքն ալ ունին իրենց մասնաւոր աղօթատեղիները և վարժարանները: Երկրին սովորական լեզուն է արաբերէն. տաճկերէնը կառավարութեան դուռը կը գործածուի, իսկ հայերէնը քանի մը պանդուխտ հայերի տեսակցութեանց մէջ: Իսկէնտէրունի մէջ ամեն ազգ ունի իրեն յատուկ տարազ, սովորութիւն և բնաւորութիւն. իգական սեռի գեղեցկութեան մէջ ալ իր բաղդատական առաւելութեամբ կը փայլի Փէլլահ գեղուհին:

Իսկէնտէրունի հայք ամենքն ալ պանդուխտ են, դաղթած Արաբկիրէն, Դամասկոսէն, Կիլիկիայէն, Կեսարիայէն, Եգեսիայէն և այլն. բնիկ հայ ժողովուրդ բնաւ չկայ: Կը պատմուի թէ՝ օր մը պանդուխտ հայ մը կը մեռնի. Պապականք և Յոյնք կը դըժկամակին զայն թաղելու: Հայ քահանայ ևս չգտնուելուն երեսի վրայ կը մնայ, մինչև որ Պէյլէնի հայ քահանան կը հասնի և կը տանի կը թաղէ: Ասոր վրայ հայերն յուզուելով՝ հանդանակութիւն մը կը բանան և դրամ հաւաքելով կառնեն տնակ մը և կը վերածեն եկեղեցւոյ, որ ցարդ կը մնայ և որոյ դժուարընթեռնլի արձանագիրն է այս.

Նորաշէն տաճարս յանուն մանկանց
քառասնի
Տրօք և արդեամբ համայն ժողովրդի
Յայցելութիւն տեառն այժմ հասանի
Աղէքսանդրիացւոց սուգն իւր մերժի,

*) Մենք ինքներս ամենից աւելի կարիք ունինք հոգու բժշկութեան. բայց ինչպէս որ յիմար հիւանդին յատուկ է մերժել իւր առողջութեան նպաստող դարմանը լոկ այն պատճառով որ դարմանող բժիշկը ինքը ցաւագար է,—այնպէս էլ իմաստուն մարդուն յատուկ է՝ ուշք չդարձնել այն բանի վրայ—արդեօք իւր բժիշկը հիւանդ է թէ առողջ, այլ քննել դեղի օգտակարութիւնն և իմանալ՝ առողջարար է արդեօք թէ վնասակար:

րաւ աշխարհ առեալ ի ծոցոյ հօրն յաւիտենից: Մեք ինչո՞ւ փափագ չունենամք պմեզ ինքեանս կրթելու, մեզ յանձնուած շնորհքին վրայ մտածելու և մինչև ի խորութիւն թափանցելու: Ցաւալի է ապաքէն որ շատերս այս բանիս համար ի գործ դրած ժամանակնիս անպէտ սպառումն կամ վատնումն կը համարինք, չեմք ամաչեր չ՚գիտնալնուս վրայ ոչ միայն վարդապետութեան վրայ բարձր և դժուարին կէտերը, այլ և քահանայութիւն ընելու համար առձեռն պէտք եղած էական գիտելիքներն անգամ, վեր ի վերոյ և կիսկատար տեղեկութիւններն բաւական կը համարիմք: Երբ մենք մեր յատուկ մտառութեամբ չեմք ուսաներ վարդապետութիւնն՝ զոր թարգմանելու կոչուածն ունինք, ինչպէս կրնանք նոյնը տպաւորել մեզ յանձնեալ ժողովրդեան մտաց մէջ: Մեր տգիտութեան հետևանքն է որ ժողովուրդը չ՚գիտեր և չ՚սիրեր կրօնքն արժանապէս, բարեպաշտութիւնն առերեւոյթ և բոլորովին նիւթական է և ոչ թէ համոզմամբ և գիտնաբար. շատերը կրօնքն ինչ է չ՚գիտեն, արտաքին գործնականներն անգամ այլանդակօրէն կը կատարեն, բնաւ տեղեկութիւն չունին թէ ինչ է հաւատքին բուն և ճշմարիտ հոգին, ինչ զօրութիւն և փախճան ունին եկեղեցւոյ խորհուրդներն, ինչպէս կը կատարուին քրիստոնէի մը իրական և փըրկարար պարտաւորութիւններն: Եւ ինչպէս կրնան գիտնալ, երբ իրենց ուսուցիչ սահմանեալ հոգևորականք ոչ միայն չեն սորվեցներ, այլ և իրենք իսկ սորվելու փոյթ չունին:

Առարկուի թերևս. շատ քահանայներ այնչափ աղքատ, չքաւոր և օրական պարէնի իսկ անձեռնհաս են, որ կարևոր գիրքեր չեն կրնար գնել: Ցանկացողին շատ դիւրին է ուզածը ճարել. եթէ սիրէ, եթէ փափագի, եթէ պէտք լինելն զգայ, ամէն կարելի խնայութիւն և պարկեշտ դիմեցումներ կը գործածէ, մինչև յաջողի ձեռք բերել: Եւ քահանայական կարգ ու կանոն և ստիպողական կրթութիւններն ուսանելու համար միթէ շատ մը գրքի կամ ահագին դրատան պէտք կայ. կարևորները կարի սակաւ բաներ են և յոյժ դիւրագնի. թող ունենան սորվելու փափագ, ժողովրդեան օգտակար լինելու բաղձանք, փրկութեան գործոյն ծարաւ, սորվելու և սորվեցնելու պարտուց խղճահարութիւն՝ ուզած գրքերին կրնան ձեռք բերել. ապա թէ ոչ՝ եթէ Առաքելոց ժամանակէն մինչև այսօր գրուած մատեանններն բոլորտիքը շարես և պարսպես՝ մէջէն կը փախչի:

Առարկուի թերևս. միթէ ամէն կարգաւոր տաղանդաւոր կրնա՞յ լինել, և միթէ ամէնքն ալ գիտութիւն սորվելու համար մտքի բացութիւն կրնա՞ն ունենալ: Այո, բայց ահա այսպիսիներն են, որք պարտին առաւել ևս յաճախ գիրք կարդալ, և տրամադրութեան բնական թերութեանց աշխատութեամբ յաղթել: Մանաւանդ զի՝ միթէ քահանայութեան յատուկ պարտքերն և կանոններն սորվելու խնդիրն այնքան եզական տաղանդի կը կարօտի: Դիցուք թէ բնութիւնն այնչափ անակնկալնելի բթամտութիւն շռայլեց, գոնէ սուրբ վարք մը և պարկեշտ քաղաքավարութիւն մ՚ ալ չեն կրնար ունենալ, գոնէ օրինակի գեղեցկութեամբ բարձր կրթութեան և եզական տաղանդի պակասը չէ՞ին կրնար լրացնել: Ո՛չ ապաքէն Աւետարանի առակաւոր ծառայն՝ որում շատ նուազ քանքար աւանդեցաւ, ինքն ալ չ՚գործածելուն համար դատապարտեցաւ: Դարձեալ կ՚ըսեմ. խեղճ ժողովուրդ մը սրբութեամբ և օգտակարապէս կառավարելու համար միթէ մարդկային գերազանց տաղանդի պէտք կայ: Ո՛չ, ո՛չ, եղբարք. ոչ, սիրենք մեր ժողովուրդը, խնկապէս փափագիմք նորա փըրկութեան, նկատմամբ ժողովրդեան՝ հովուի և հօր սիրտ ունենանք, ժողովրդեան մեղաց և մոլորութեան վրայ սրտերնիս մորմոքի, Աստուծոյ արքայութեան տարածուելուն և ընդարձակուելուն անձուկ կրեմք, սրտերնիս այրի թէ ինչու արիւնն Յիսուսի Քրիստոսի ի զուր ռողանէ ամուլ և անպտղաբեր անդաստանի վրայ, և ահա այս սուրբ և աստուածային ծարաւ մեզ շատ բան կը սորվեցնէ: Ես այնքան երանի չեմ տար ժողովրդեան, որոյ հովիւը շատ լուսաւոր, բայց դժբաղդաբար հոգի Աստուծոյ չունի, որչափ այն ժողովրդեան՝ որոյ հովիւը թէպէտև պարզ մարդ է, խոնարհ է և արտաքուստ փայլուն չէ, սակայն հոգի առաջնորդական կը կրէ: Եկեղեցին այս հոգւով վարիչներուն պէտք ունի:

Չ՚մոռնանք ասել թէ այն հովիւք՝ որ ինքեանց ծուլութիւնն և տգիտութիւնն արդարացնելու համար գիրք չունինք, մտացիութիւն չունինք կ՚ըսեն, ոչ միայն ուսման փափագ և ջանացողութիւն՝ այլ և բարեպաշտութիւն, նախանձաւորութիւն, աղօթասիրութիւն, առանձնասիրութիւն, ժողովրդասիրութիւն և հովուելու փոյթ ալ չունին: Այս հովուական առաքինութիւններն շատ աւելի արժեւաւոր, կրթիչ և շինիչ են ժողովրդեան՝ քան թէ խել մը փուռլուց գիտութիւններ՝ որ օճառի պղպջակի պէս բանի մը չեն ծառայեր, ցորչափ անսիրտ և անհոգի մտաց մէջ ամուլ կը մնան: Տգիտութիւն, դատարկակեցութիւն, զբօսասիրութիւն, պարտազանցութիւն միշտ մեկտեղ կը քալեն: Եւ չիրաւի, քննեցէք թէ տգէտ, անընթերցասէր, պարապորդ և անգործ հովիւներ ինչ կեանք կը վարեն. դժբաղդաբար շատ ստորին և վայրաքարշ կեանք, և որոց ժողովուրդը, գիտէ Աստուած, թերևս շատ անմեղ և քրիստոնէավայել կեանք ունի քան թէ իրենք, որք բնաւ հոգ չունին Յիսուսի Քրիստոսի անդաստանին արդասաւորման, կը թողուն զայն խոպան և անմշակ, և ինքեանք իւրեանց բոլոր փութովն կ՚իջնան միայն և միայն իրենց պնակին և հասութաբեր ծէսերուն վրայ, ինչպէս են մեռեալ թաղել, պսակ դնել և այլն: Ոչ այսչափ միայն, այլ և ի պատճառս տգիտութեան և ագահութեան առտնին սեպհական այցելութիւններն և քահանայութեան շահեկան հոգաբարձութիւններն, որ սովորաբար ժամ բառով կը հասկցուին, իրարու ձեռքէ կը յափշտակեն, ժողովրդեան հետ կռուի և դատաստանի կը բռնուին՝ որոց խնամակալն և հայրն լինելոց էին, և որոց մէջ եկեղեցին զիրենք հաստատեր է իբրև հրեշտակ խաղաղութեան: Երբ դատարկութիւննին զբաղեցնող նիւթական շահերն դադարին, որովհետև գիրք և ուսումն չունին՝ որովք բարեփոխեն անհանգստութիւննին, այլ ևս ոչ ժամատուն կը սեղմին և ոչ վանք, այլ շարունակ կը թափառին կամ զիրենք զբաղեցնելու կամ իրենց պէս թափառիկ և պարապորդ կարգակիցներ երթալ գտնել և զբաղեցնելու: Չ՚կարելով մնալ պաշտօնի մը գլուխ՝ քաղաքէ քաղաք և տունէ տուն հետերնին կը քարշեն կը տանին իւրեանց անպիտանութիւնն իբրև «Շնչաւորք նշանաւորեալք որ զՀոգի ոչ ունին». Յուդ. 19:

Բայց սակայն, ինչ կեանք ու վարք է այս. կը վայլէ՞ որ այսպէս լինին, քանի որ Յիսուսի Քրիստոսի երեսփոխանն են ժողովրդեան մէջ, մատակարարք են ահաւոր սրբութեանց, վտակ և անցք են երկնաւոր պարգևաց, կատարիչք են փըրկարար խորհրդոց:

Վերջապէս, ցորչափ ուսմունք և գիտութիւն չենք սիրեր, շէնք-շնորհք մարդ անգամ չենք լինիր, ո՜ւր կը մնայ քահանայ Աստուծոյ բարձրելոյ:

ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍՈՅ
ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳԵՂԵՑԻԿ ՆԱՐԳԻՍԸ

Նորավէպ

[Գրեց Շարլ Գէօլէտ (Charles Gueullette),
թարգմանութիւն ֆրանսերէնից]

(Շարունակութիւն և վերջ *)

III.

Փիլանդրը փոքր ինչ զարմացաւ երբ իւր առաջին գերասանը ներկայացրեց նորան այս անշնորհք և վատ հագնուած աղջկան, որ իւր ասելով ժամանակով իբրև մի աստղ պէտք է փայլէր. չը վստահացաւ որևէ առակութիւն անել: Գիտէր որ Պէերը շատ փորձուած է իր արուեստի վերաբերեալ խնդիրներում և նորան այնքան ոգևորուած տեսնելով համոզուեցաւ թէ հրաշքներ պիտի գործէ: Բացի սրանից աղջիկը շատ գեղեցիկ էր. մի հանգամանք, որ լաւ նշան էր նորա աչքում:

Նոյն օրը, գեղեցիկ Նարգիսը՝ օր. Դէ Լասուրսին՝ իր նոր ընկերուհուն, բնակեցրեց մի պառաւ դերասանուհու մօտ,

*) Տես «Արձագանք» № 32:

Որք եղեն պատճառ կանգնելոյ յամակի
Գրեսցին անուանք չերկնից կամարի
Ջի աշխատեցաք զօր ամենայնի
Եւ արքայութեան լիցին արժանի
Կանգնումն եղև զայս տաճարի
Ի Թուին Փրկչի և կենարարի
1872-ի, յունուար ամից 11-ի։

Այս Թուական է սկզբնական հաստատութեան Թիւ, հետևաբար ժողովուրդը ալ նոր եկած տեղաւորուած։ Շէնքն պարզ է և ցած, քահանան պանդուխտ, իսկ հոգևոր վերին տեսչութիւնը կը պատկանի Կիլիկիոյ կաթողիկոսին։

Հայոց տեղական վարժարանը ունի ընդ ամենը երկսեռ 50 ուսանող. կուսանին հայ. Տաճկ. Դաղղ. Թուաբ. Կրօնք և Աշխարհագրութիւն, միակ դասատուն է Ս. Երուսաղէմայ ժառանգաւորաց վարժարանի սաներէն Սիսակ էֆ. Հազարունի, կարող, աշխատող և չարքաշ երիտասարդը. աշակերտք համապատասխանելով դասատուի ճգանց, բաւական ուրախալէտ վիճակ մը ստացած էին և տակաւին մեծ յոյս ալ կար։

Խսկէնտէրուն ունի հիւրանոց, նուագավայր, մեծ վաճառատուն, պանդոկներ և վեց հարիւրի մօտ կըրպակներ. առևտրական վիճակը լաւ է շնորհիւ իւր բանուկ նաւահանգստին։

Տեղւոյն հայերէն հարուստներ են տեարք Պալեան Կարապետ, Ջամլեան Պօղոս, Փափազեան Մանուկ, Այվազեան Սարգիս և Քէշիշեան-Պօղիկեան։ Կայ նաև ազնիւ երիտասարդութիւն մը՝ բարեկամ կրթութեան, օժանդակ աղքատաց։

Խսկէնտէրուն կայ հեռագրատուն, ցամաքին և ծովու Սուրհանդակ, մաքսատուն և Գաղղիացւոց, Պարսից, Ռուսաց հիւպատոսարաններ։

Խսկէնտէրունի հայք ազգային լոկ Թաղ. խորհուրդ մը ունին, որոյ յարգելի Ատենապետն է Քէշիշեան Քերովբէ էֆէնտին, այր համակրելի, գործօն և վստահելի։ Սոյն Թաղական խորհուրդ կը վարէ եկեղեցական կրթական և տեղական գործերը։

— Պէրութ՝ Սուրիոյ գլխաւոր քաղաքն և նաւահանգիստն՝ բարձրահայեաց դիրք մ'ունի, շինուած է Լիբանան լերանց հարաւային վերջաւորութեանը վրայ, ունի մաքուր սալայատակաւոր փողոցներ, հոյակապ շէնքեր և ախորժելի տեսարան։ Ի վաղուց տնտի նշանաւոր լինելուն, ուղևորը կը հարկադրուի նաւէն դուրս ելլել և տեսնել այս հին քաղաքին ճոխ վաճառատունները, հասարակաց շէնքերը, հոյակապ պանդոկները, զօրանոցները, օԹևանները և ստուար արաբախօս բազմութեան մը ժխորը, ճիչը և իրարանցումը։ Ուստի մենք ալ դուրս ելանք նաւէն և արժանացանք ուխտ մը նաև ընել մեր հայկական Ս. Փրկչի վանքը, որ կը գտնուի բարձրաւանդակի մը վրայ, նաւահանգստէն իբր կէս ժամ հեռի։ Վանահայրը բացակայ էր, ուստի դժեղ հիւրասիրեց Սեբաստացի Արժ. Քէշիշեան Վահան վարդապետը. եկեղեցին Թէպէտև փոքր էր, բայց ճաշակաւոր և կոկիկ զարդարուած, որոյ ճակատագիրն է այս.

«Օծմամբ սրբեցելով հաստատեցաւ Եկեղեցիս յանուն Ս. Նշանի Փրկչին ի յիշատակ նախահաւատ Ազգիս Հայոց, բարեջան տենչանօք Սրբոյ գահին Երուսաղէմի Տ. Տ. Յովհաննու Սրբազան Պատրիարքին Զմիւռնացւոյ, ի մատուցումն պաշտաման Սրբազան խորհրդոյ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան, գնեալ արդեամբ Յովսէփ սարրաւագի Այնթապցւոյ միաբանի Սրբոյ աԹոռոյն Երուսաղէմի։ Յ'ամի Տեառն 1851 փետրվար 28։»

Պէրութի բնակչաց Թիւը կը հասնի իբր 120,000-ի՝ արաբ, յոյն, հրեայ, կաթոլիկ իւր ամեն տեսակներով, հայ և բողոքական։

Հայերը Թէպէտ և փոքրաթիւ են, իբր 20 տան չափ, բայց ունին պատուաբեր դիրք, վարժարան նոր բանալու կ'աշխատէին, մինչդեռ բողոքական և կաթոլիկք կը պանծան իրենց բարեկարգ վարժարաններով։ Պէրութ կամ Պէրիթէ այժմ առանձին կուսակալութիւն է. կը գտնուին նաև իւր մէջ եւրոպական ներկայացուցիչներ և կրոնապետներ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌՈՒԴՈԼՓ ՓԻՐԽՈՎԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Բերլինի Թերթերը նուիրել են Փիրխովի յոբելեանին ամբողջ էջեր, պատկերազարդ հանդէսներն ամբողջ համարներ։ «Մեր եօԹանասունամեայ Ֆիրխովին ողջունում է բոլոր քաղաքակիրթ աշխարհը, ասում է «Berliner Tagebl.»—և մենք չենք կարող չարտայայտել մեր յարգանքը մեծ գիտնականին, անգրգուելի համոզմունքների տէր քաղաքագէտին և ազնիւ հասարակական գործիչին։» Արդարև աշխարհիս բոլոր երկրներից գիտութեանց ճեմարաններից, համալսարաններից, գիտնական ընկերութիւններից, բժիշկներից և քաղաքական խըմբերից, շնորհաւորական հեռագիրներ և ուղերձներ ստացուեցան յոբելեանի օրը Բերլինում։ Բերլինի քաղաքային վարչութեան ուղերձը վերին աստիճանի իմաստալից է և գեղեցիկ. «Ձեր ամբողջ գործունէութիւնը սերտ կապ ունի քաղաքային ինքնավարութեան շահերի հետ, որովհետև դուք ոչ միայն մի նոր գարագլուխ ստեղծեցիք բժշկութեան մէջ, այլ և մատնանիշ արիք Թէ հասարակական առողջապահութիւնը ինչ պարտաւորութիւններ պէտք է ունենայ, ինչ նպատակներին պէտք է ձգտէ։ Սակայն դուք չշատացաք ուսուցչի դեր կատարելով բժշկական ասպարիզում և հետազօտողի՝ մարդկային մտքի աւելի ընդարձակ շրջաններում—դուք նուիրեցիք ձեր անձը նաև հայրենիքի ընդհանուր շահերի ծառայութեան և միշտ հաւատարիմ մնացիք ձեր համոզմունքներին՝ ազգիս անխոնջ և բազմահմուտ ներկայացուցիչ լինելով պարլամենտում։ Ձեր քաղաքական գործունէութեան մէջ նպաստելով ինքնավարութեան զարգացման դուք միևնոյն ժամանակ զարմանալի եռանդով և ինքնուրացութեամբ 32 տարի շարունակ աշխատել էք Բերլին քաղաքի օգտին, որին դուք շնորհեցիք հիւանդանոցների և ապաստարանների ներկայ կազմակերպութիւնը, դպրոցների առողջապահական կազմութիւնը, ջրանցքի և փողոցների մաքրելու կատարելագործութիւնը և մի ամբողջ շարք այլ հանրօգուտ ձեռնարկութիւններ։ Իբրև մեր երախտագիտութեան ապացոյց ընտրեցինք ձեզ մեր պատուաւոր քաղաքացի»։

Ամերիկայի, Անգլիայի, Շուեդիայի, Հօլլանդիայի և նոյն իսկ Ռուսաստանի բժիշկներն ուղարկել էին Բերլին իրենց ներկայացուցիչներին յոբելեանին շնորհաւորհելու համար։ Բացակայ էր Ֆրանսիան։

Բայխստագի անդամներից ընտրած մի պատգամաւորութիւն ներկայացաւ Փիրխովի բնակարանը՝ մատուցանելով նորան արծաԹից շինած մի սիւն, որի վրայ քանդակագործուած են գիտութեան և լուսոյ հանճարի էմբլէմներ։ Սիւնի պատուանդանի վրայ փորագրուած են Սպինոզայի հետևեալ խօսքերը. Certi sumus mentem humanam aeternam esse, quatenus res sub specie aeteranatis spectamus. «Մենք կամենում էինք այս ձևով արտայայտել,—ասաց Բիխտերը,—որ դուք իբրև սիւն բարձրանում էք ձեր գիտնականների շրջանում, որ դուք միշտ ցոյց էք տուել այն ճանապարհը, որով կարելի է գտնել ճշմարտութիւնը և որ տանում է դէպի ձեր հայրենակիցների բարօրութիւնը»։

—

Պարնելի մահը նորան դարձրեց ազգային գաղափարի նահատակ և այն ստուերը, որ մԹնացրեց նորա քաղաքական ասպարէզի վերջին օրերը, անհետացաւ այժմ անփոխարինելի կորստի մեծութեան առաջ։ Իրլանդական ժողովրդի մեռեալ առաջնորդը նորից ազգի սրտում բըռնեց այն տեղը, որ ունէր իր ապահարզանի դատից առաջ. Նա աւելի ևս Թանգակին դարձաւ ազգի համար, որովհետև նորա մահը Իրլանդիայի համար անփոխարինելի է։ Երբ դագաղը Լոնդոնից անցկացրին Դուբլին տանելու համար հազարաւոր իրլանդացիք եկան նորա աճիւնին երկրպագելու, դագաղի վրայ ծաղիկներ էին նետում և պսակներ դնում։ Պարնելի աճիւնը Դուբլինի գերեզմանատանը հանգչում է Օ'Կօնիլին կից։ Պարնելին հաւատարիմ մնացած պատգամաւորները, որոնց պարագլուխը Ելլի'ն է, մեծ ժողովրդականութիւն սկսեցին վայելել։ Պարնելի վերջին խօսքերն եղել են. «Մատուցէք ողջոյնս բարեկամներիս և գեղեցիկ Իրլանդիային։ Որքան կուզէի շարունակել ծառայելու նորան»։ Մի ապացոյց Թէ որ աստիճանի էր հասնում ժողովրդի ակնածութիւնը դէպի մեծ ազգային գործիչը կարող է այն փաստը լինել որ ամբոխը կոտրտեց այն արկղը, որի մէջ դրած էր դագաղը, և կտորները բաժանեց իր մէջ իբրև մի նուիրական յիշատակ։ Թաղման օրը Իրլանդիայի բոլոր մասերից երկաԹուղու արտաքոյ կարգի գնացքներ էին ժամանում Դուբլին՝ բերելով հանգուցեալի պաշտողներին։

—

Ֆրանսիական Թերթերի Կ. Պօլսի ԹղԹակիցները հաղորդում են որ Ֆրանսիական նոր դեսպան Կամբօնին ընդունելիս, Սուլթանը հրամայել է նուագել մարսէյէզը, որ մինչև այժմ արգելուած էր Թիւրքիայում։

—

Եմէնի ապստամբութեան առԹիւ Կ. Պօլսից գրում են «Observer»-ին, որ Սապոն ընդամենը 5000 զօրք ունի 35,000 լաւ զինուորուած ապստամբներով, որոնց առաջնորդում է Հանդելգինը։ Նահանգապետ Էզիպ փաշան հաղորդում է որ նորա պահեստները սպառուել են և շուտափոյթ օգնութիւն է խնդրում։ Մեկկէից օգնութիւն է հասել Ֆէյզի-փաշան։ «Figaro»-ի ԹղԹակցի ասելով՝ մի աղէտ է։ Զմիւռնիայից և Սալօնիկից նորանոր վաշտեր էին ուղարկուած։ Զինուորական իշխանութիւնը դրօշակի էր կոչել Մակեդոնիայի զօրքերը։ Աչքի առաջ ունենալով, որ ապստամբութիւնն ազգային—արաբական բնաւորութիւն է ստացել, տաճկաց կառավարութիւնը հաւատ չընծայելով Սիրիայի զօրքերին, կարգադրած է Արաբիա ուղարկել տաճկական և ալբանական ազգութեանց պատկանող զինուորներ։

—

Կ. Պօլսից հաղորդում են եւրոպական լրագիրներին որ յունական պատրիարքական խորհրդի հոգևոր անդամները իրենց քուէները կամենում էին տալ Հերակլէի մետրօպօլիտ Գերմանին, իսկ աշխարհական պատգամաւորները նախադասեցին Նախկին մետրօպօլիտ Յովակիմին։ Այնպիսի տարաձայնութիւններ տեղի ունեցան, որ հարկ եղաւ ժողովը փակել։

ԶԱՆԱԶԱՆ

Մի գաւառական Թերթ մի հետաքրքրական պատմութիւն է անում, Թէ մի ծեր բժիշկ ինչպէս է գործ դրել իր գիտութիւնը իր ապագայ փեսայի վերաբերութեամբ։

Մի առաւօտ մտնում է բժշկի մօտ մի երիտասարդ Ֆրակը հագին, սպիտակ փողպատով, ձեռնոցներով։ «Ի՞նչու այդպիսի հանդիսաւոր կերպիւ էք ներկայանում»—հարցնում է բժիշկը։ Երիտասարդը բացատրում է որ սիրահարուած է բժիշկի աղջկայ վրայ, վայելում է փոխադարձ սէր և նորա Թոյլտուութեամբ եկել է խնդրել հօր համաձայնութիւնը և օրհնութիւնը։ «Հանուեցէք», — գոչեց բժիշկը։

—Ինչպէ՞ս Թէ հանուեմ,—հարցնում է երիտասարդը։

—Ասում եմ ձեզ շորերդ հանեցէք, — աղաղակեց բժիշկը։

Երիտասարդը հանեց շորերը։

—Պառկեցէք,—գոչեց բժիշկը։

—Ինչպէ՞ս Թէ պառկեմ։

—Պառ-կե-ցէք, ա-սում-են ձեզ։

Երիտասարդը պառկեց դիվանի վրայ։ Բժիշկը սկսեց նորան քննել, լսեց կուրծքը, տրորեց, Թափ տուեց ու ասաց երիտասարդին.

—Կարող էք ամուսնանալ, դուք բոլորովին առողջ էք, և աւելացրեց.—այժմ հագնուեցէք և եկէք դահլիճ, ես ձեզ կ'օրհնեմ։

—

Լոնդոնում հրատարակուած վիճակագրական տեղեկութիւնները Անգլիայի և Շոտլանդիայի մէջ եղած աղքատների Թուի մասին, 1857-ից մինչև 1891 Թիւը, ցոյց են տալիս, որ աղքատութիւնը վերջին քառորդ դարում զգալի կերպով պակասել է։ 1857-ին 812, 392 մարդ ստանում էին նպաստներ, այսինքն հազարին 42,2 մարդ, այն ինչ 1891 Թ., չնայելով որ ազգաբնակութիւնը մի միլիոն աւելի մնիայն 637,811 կամ հազարից 21,2 մարդ։ Աղքատների Թիւը նուազում է տարէց տարի։

—

Վիլ դ' Ավրէում կը կատարուի նոյեմբերի սկզբին Գամբերտային արձան կանգնեցնելու հանդէսը։ Նորա սիրտը որ գտնուած է այժմ Պօլ Բերի այրի մօտ, կ'պահպանուի այս արձանի մէջ։

—

Տփեր քաղաքում, 1891 Թուի սեպտեմբերի 22-ին մի երեկոյթ է տեղի ունեցել. «Դեն» լրագիրը տպել է այդ երեկոյթի յայտագիրը, որ Թարգմանօրէն առաջ ենք բերում այստեղ.

«Կիւրակէ, 1891 Թ. սեպտեմբերի 22-ին, ազնուականների ժողովի դահլիճում, Միխայիլ Ալէքսանդրի Բերնովը, Փարիզի Ֆրանկօ-ռուսական Թատրոնի (?) կառավարիչը, յօգուտ սովեալների տալու է մի Ֆրանկօ-ռուսական հանդէս բարեհաճ-մասնակցութեամբ օր. Նինա Կորդանեան—Դարիալի, որ գերմանական և տաճկաց պալատների երգչուհի է, Բէյգերի (սօպրանօ), Կոստանեանցի (տէնոր) և այլոց։ Պարեր, Ծաղիկների անձրև և ճակատամարտ։»

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացուած է բաժանորդագրութիւն ազգային կարևորագոյն և ընտիր գրքուկի մը, որ անհրաժեշտ է ամէն հայ մանկտւոյ և անհատի այս է.

ԸՆՏԻՐ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ
ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐ. ՅՈՒԵԼԵԱԼ ԵՒ ՃՈԽԱՑԵԱԼ ԵՒ ԶԱՐԴԱՐԵԱԼ ԸՆՏԻՐ ՊԱՏԿԵՐՕՔ

Գրքոյկս կը բաղկանայ մօտ 16 մեծադիր Թերթերէ. տպագրութիւնը նորաձոյլ տառերով և ընտիր Թղթի վրայ է. 27 նոր, գեղեցիկ և նուրբ փորագրութեամբ պատկերներ՝ կը զարդարեն գրքուկիս էջերը, որք կը յիշեցնեն և կը զարթուցանեն հայ մանկտւոյ սրտից և երակաց մէջ ազգութեան ոգին և եռանդը, և կը յորդորեն զիրենք նմանիլ իրենց հարց։

Բաժանորդագրութեան գինն է 4 Ֆրանք՝ կանխիկ վճարելի. տպուած Թերթերն առանձին առանձին կ'ուղարկուին իւրաքանչիւր Բաժանորդագրաց։ Այն անձինք՝ որք 12 օրինակէ աւելի կ'առնուն մի անգամով, և կամ Դպրոցներ՝ որք կ'ուզեն իրենց համար գանազան օրինակք՝ նոցա յատուկ և զգալի զեղչ կ'շնորհուի։ Բաժանորդագրութեան գրուիլ ցանկացողք դիմեն հետևեալ հասցէիւ.

DIRECTION
DE L'IMPRIMERIE ARMÉNIENNE
VENISE. St. Lazare

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

«Թուաբանական խնդիրներ և օրինակներ տարրական դասընԹացք. մասն Առաջին—խնդիրներ և օրինակներ առաջին հարիւրեկի Թուերով և ամենահասարակ կոտորակներով. փոխադրեց Գրիգորիս Երզնկեանց. Ա. և Բ. տարի, Թիֆլիզ. 1891 Թ.»

որ առաքինութեան մի վկայ էր, և հարկ եղած ցուցումներն արեց։

Բացի սրանից դերասանը վերապահել էր իրան հսկել Ժաննի վրայ և կատարեց իսկ այդ՝ նուիրելով նորան իր բոլոր ժամանակը, ուսուցանելով նորան դերերը բարեխղճութեամբ և հայրական անձնուիրութեամբ։ Չէ՞ որ նա իր սեպհականութիւնն էր, իր գանձը։

Ջուտով այն անընդհատ և նախանձոտ եռանդը, որով զբաղվում էր նորա հետ, փոխուեցաւ սիրապարար քնքշութեան, հետզհետէ մի տիրապետող և մոլենախանձ կրքի բարձրութեան հասնելով։

Ես առաջ ասացի որ Պիէր Լալօնդը միամիտ մարդ էր, որից Թատրոնը չէր խլել նորա երիտասարդական ցնորքները։

Ժաննը խելքը գլխին մի աղջիկ էր և ունէր այն բոլոր յատկութիւնները, որ անհրաժեշտ էին իր նոր կոչման. այս բարեմասնութիւններով օժտուած և ուսուցչի խրատների և կրթութեան շնորհիւ չէր կարող յաջողութիւն չըգտնել։ Նորա յառաջադիմութիւնն արդարև այնպէս մեծ եղաւ, որ երեք ամիս ուսումնասիրելուց յետոյ, Ֆիլանդրի նոր դերասանուհին բեմ ելաւ, գտնելով հասարակութեան հաւանութիւնը, որ շատ խրախուսեց նորան։

Այս յիշատակի արժանի երեկոյից յետոյ նոր դերասանուհու յաջողութիւնը օրէցօր աճում էր և առաջին սիրահարների հետ շատ ներդաշնակ էր խաղում։

Գեղեցիկ Նարգիսի ուրախութիւնը չափ և սահման չունէր։ Կախարդուած այն աղջկայ գեղեցկութեամբ, որ իր դէմըն էր կանգնած, նա մեծ յափշտակութեամբ էր խաղում և Ժաննը, որին հաղորդվում էր այս բոցը, ինքը ևս տաքանում էր և կարծես ինքը ևս զգում այն կիրքը, որ վառել էր իր խաղակցի սրտում։

IV.

Անցաւ մի տարի լի անամպ երջանկութեամբ Թէ դերասանների և Թէ խըմբի կառավարչի համար, որի գործերը շատ լաւ էին գնում։

Պրօվանսի քաղաքներն այցելելուց յետոյ գարունքին վերադարձան Ավինիօն, որ Ֆիլանդրն ընդրել էր իբրև իր Թատրոնական գործունէութեան կենդրոն։

Արդ մի երեկոյ, երբ ներկայացումը պէտք է սկսուէր, յանկարծ նկատեցին, որ օր. դը Լասուրսը տակաւին չէր եկել Թատրոն։ Ժանն և ուշանալ այդ երբէք չէր պատահել նորան։ Պէտք է որ մի արտաքոյ կարգի արգելքի հանդիպած լինէր. գուցէ մի պատահարք։ Ֆիլանդրը հարցրեց Պիէր Լալօնդին, բայց սա ոչինչ տեղեկութիւն չունէր։ Մի քանի րոպէ չկար, որ Թողել էր Ժաննին առողջ և շատ ուրախ։ Անհրաժեշտ էր մի բացատրութիւն, և այդ բացատրութիւնն ստանալու համար անհամբեր դերասանը վազեց իր երիտասարդ ընկերուհու մօտ։

Մինչդեռ գեղեցիկ Նարգիսը հապճէպով գնում էր նորա բնակարանը, Ֆիլանդրը նկատեց որ պակաս է դարձեալ մի դերասան, որի բացակայութեան վրայ ոչ ոք ուշք չէր դարձրել, այնքան քիչ նշանակութիւն ունէր այդ անձնաւորութիւնը։

Խօսքը Կլօդի մասին էր, որ կատարում էր երևակի (սատախոսի) պաշտօնը. մի յաղԹանդամ, Հերքուլէսի հասակով մարդ, որի խելքն այնքան սահմանափակ էր, որ նորան ամենքը Կլօդ ապուշ էին կոչում։

Իսկ սա ինչու էր բացակայ. այդ զուգադիպութիւնն առ նուազն տարօրինակ էր։

Բայց միԹէ կարելի է ենԹադրել—Ի՞հ, սիրոյ խնդիրների մէջ ոչինչ անկարելի չէ։—Ի՞նչ էք ասում, մի այդպիսի արջ։—Ի՞նչ գուզէք ասէք, բայց վիթխարի տղամարդ է, իսկ փոքրիկ դերասանուհին շատ համարձակ է չ'նայելով իր անմեղ դէմքին։

Այս բացադրութիւնները մէկը միւսին հետևում էին, երբ Պիէր Լալօնդը վերադարձաւ երեսը գունատ, դէմքի գծագրութիւնը շփոթուած։ Դերասանուհին տանը չէր. տեսել էին Թէ ինչպէս նա դուրս էր եկել հետը տանելով զգեստներն ու զարդարանքները։

Գեղեցիկ Նարգիսը մի անասելի անհանգստութեամբ լի հայեացք ձգեց։ Ամենքը լռեցին։—«Ուրեմն, մրմնջաց նա, Ժաննը այստեղ չէր գալիս»։ Եւ մի վըշտալին նախազգացմունքի ազդեցութեան ներքոյ, նա անհետացաւ և ոչ ոք չըբռնեց նորա ձեռը։

Այդ երեկոյ Ֆիլանդրի Թատրոնում ներկայացում չկար։

V

Այո, դժբաղդաբար ճշմարիտ էր։ Ժաննը, այդ հրաշագեղ սեւաչեայ խարտեշահեր կինը, Ժաննը, ինժենիւ դերասանուհիների այդ իդեալը, ընծայել էր իր անձը Կլօդ երևակին, Կլօդ-ապուշին, ամենակոպիտ մի գիւղացու և երկիւղ կրելով, որ ոչ ոք չխլէ դորան իր ձեռքից՝ Ժաննը համոզել էր նորան իր հետ գնալ։

Մինչդեռ Ժաննը իր մարմնային պահանջներին ստրկանալով, Կլօդի ընկերակցութեամբ շրջում էր մի ուրիշ Թափառական խումբ գտնելու համար, Պիէր Լալօնդը, գիտենալով իր դժբաղդութեան չափը, երեխայի պէս լաց էր լինում։

Նախ որոնել էր նորան քաղաքի հիւրանոցներում, այնուհետև աննպատակ շրջում էր քաղաքից դուրս տանող ճանապարհներով՝ յոյսը դիպուածի վրայ դրած։ Նա մի անյաղԹելի պահանջ էր զգում տեսնել Ժաննին և նա ամենքին հարցուփորձ էր անում։ Բայց նորա ձայնը առանց արձագանքի մնաց և խեղճ դերասանը կսկծից սրտաբեկ, վերադարձաւ Ավինիօն, այն միակ նպատակով որ գտնէ այնտեղ իր յիշատակները։

Թատրոնում խաղալու մասին խնդիր իսկ չկար։ Մի արուարձանի խուլ քուչում Թաքնուած, հեռու Ֆիլանդրից և հին ընկերներից, Պիէրը կոչում էր դէպի ինքը սիրեցեալ ապերախտի պատկերը։ Ի՞նչ փոյԹ նորան մնացեալը։ Իր բեմական յաջողութիւնք, բոլորը մոռացել էր։ Իսկ այն երիտասարդութիւնը, որի մարմնացած գաղափարը այնպիսի կատարեալ արհեստով կրում էր իր անձի վրայ. այժմ նա բոլորովին հոգ չէր տանում իր անձի, իր արտաքին կերպարանքի մասին։

Մի առաւօտ, երբ իր վշտին անձնատուր շրջում էր Ավինիօնի շրջակայքում, բնազդմամբ ուղղեց իր քայլերը դէպի այն փոքրիկ անտառիկը, ուր անցեալ տարի, հանդիպել էր գեղեցիկ աղբրանին։

Յուշմունքների պահանջ զգալով, դերասանը գնաց դէպի այն աղբիւրն, որ ուրախ կարկաչում էր և նորից ջնստեց կակուղ մարգագետնի վրայ։

Դարձեալ մայիս էր, ինչպէս իր առաջին այցելութեան օրը. Թռչունները երգում էին ծառերի վրայ, ծղրիԹը մամուռի տակ ճռուողում էր և ամբողջ բնութիւնը՝ գարնան երգն էր նուագում։

Գեղեցիկ Նարգիսը հետզհետէ զգալով իր մէջ մի կենդանարար ազդեցութիւն ցնորքների մէջ ընկղմուեցաւ։

Ուրեմն ոչինչ չէր փոխուել։ ԹիԹեռնիկները պտոյտներ էին անում տարածութեան մէջ։ Ոսկեգոյն միջատը դարձեալ բարձրանում էր խոտի ծղի վրայ։ Սակայն մէկը պակաս էր բնութեան այդ յարութեանը, այն է սատուածուհին, և այն՝ գարնան աստուածուհին։

Պիէրը գոցեց աչքերը՝ այդ յիշատակն իր մէջ աւելի լաւ արԹնացնելու համար և իր երևակայութիւնը պատկերացրեց նորան այնպէս, ինչպէս այն օրն էր, այն խարտեաշ մազերի ալիքներով, այն երիտասարդական արծաԹեայ ձայնով, որ հնչել էր իր ականջին։

—Ժա՛նն, իմ Ժա՛նն, բացականչեց նա, եկ, աղաչում եմ քեզ։ ՄիԹէ մենք միմեանց չենք պատկանում մեր սրտի յաւիտենական երիտասարդութեամբ։ ՄիԹէ կա՞յ աւելի յափշտակուած, համակրութեան աւելի արժանի սիրահար։

Այս ասելով նա բարձրացաւ տեղից և բազուկները պարզելով դիմեց դէպի աղբիւրը, կարծես կամենում էր գրկել այնտեղ անշօշափելի ուրուականը։

Ալիքի հայելու մէջ արտափայլում էին կանաչ ճիւղերը և ծաղկած սրափուշ սպիտակ աստղիկները։

Բայց յանկարծ եղևնիների միջև նա տեսաւ մի ծեր մարդ, որի անդամները դողում էին, որի դժգոյն դէմքը կնճիռներով էր ծածկուած և որի՝ ժամանակից դեղնեալ գլուխը կմախքի գանգի էր նըմանում։

Պիէրի համար դա մի շանԹահարիչ յայտնութիւն էր.—«Գեղեցիկ Նարգիս», հեգնութեամբ ծիծաղեց նա։ Նորա ծընկները յանկարծ խոնարհուեցին, նորա գըլուխն պտոյտ եկաւ և ամօԹից ու գարշելուց ցնորուած, ձգեց իրեն աղբիւրի մէջ, որի ալամանդեայ ջրերը կազմեցին նորա պատանը։

Ա. Յ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Թիֆլիզի հայոց հրատարակչական ընկ. հետևեալ հրատարակութիւնները
1) Ե. Սպիրի՝ Ռուբէնց Յովսէփ, թարգմ. Ի. Յ.։ Գինն է 15 կոպէկ։
2) Պարոնեան՝ Մեծապատիւ մուրացկանները։ Գինն է 40 կոպէկ։
Ընկերութեան անդամներն այդ գրքերը կարող են ստանալ կենտրոնական գրավաճառանոցից՝ ներկայացնելով իրենց անդորրագրերը։

Սուրբ Էջմիածնայ ուսումնարանական յանձնաժողովից պաշտօնապէս ընդունուած նոր դասագիրք «Թուաբանական խնդիրներ և օրինակներ»՝ Գրիգորիս Երզնկեանցի, տարրական դասընթացք, ա. և երկր. տարի. վաճառւում է Թիֆլիզի կենտրոնական գրավաճառանոցում. գինն է 30 կ., գումարով գնողները 20% զեղջ են ստանում։

3—3

Պատիւ ունիմ յայտնել ի գիտութիւն հասարակութեան և այն անձանց, որոնք յանձն են առել բաժանորդ հաւաքել իմ «Գեղարուեստական ալբոմին—հայ գործիչների» թէ ի նկատի ունենալով, որ շուտով լոյս է տեսնելու ալբոմը, ես անհրաժեշտ համարեցի ստորագրութիւնների ժողովելը մի տեղ կենտրոնացնել, այն է Տփխիս, կենտրոնական Գրավաճառանոցում։ Այս պատճառով խոնարհաբար խնդրում եմ բաժանորդագրութեան տարածման գործակիցներին, որ բարեհաճեն ստորագրութեան ցուցակը և ժողոված դրամը հասցնել կենտրոնական Գրավաճառանոցին մինչև առաջիկայ հոկտեմբերի 1-ը։ Այնտեղ թող դիմեն և նոքա, որոնք ցանկանում են ստորագրուել ալբոմին։ Նոքա, որոնք մինչև որոշեալ ժամանակը ժողոված դրամը չեն հասցնի, կզրկեն բաժանորդներին ալբոմը բաժանորդագրութեան 3 ռուբլի վճարով ստանալու իրաւունքից։
Ալբոմը լոյս տեսնելուց յետոյ կը ծախուի 5 ռուբլիով։

Պօղոս Տէր-Աստուածատրեան. 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Պետերբուրգի հայ և վրացի ուսանողների հրատարակութեամբ

ԿԱՐ. ԵՍՂՈՒԲԵԱՆԻ
ՀԱՅԵՐԷՆ—ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԸ

Գինը ճանապարհածախքով 2 ռուբ. է։ Հրատարակութեան պահեստը գտնվում է Գվարցովայա փողոցի վրայ, պ. Յովհ. Տէր-Սարգսեանցի խանութում։

Մեր ծխական դպրոցների ուսուցիչներից և ուսուցչուհիներից շատերը, որոնք «Թուաբանական խնդիրներ և օրինակներ» անուամբ դասագիրքս արդէն ընդունել են 'ի գործածութիւն, դիմում են ինձ իմանալու թէ՝ արդեօք դրա երկրորդ մասը երբ կը լինի պատրաստ։ 'Ի գիտութիւն յարգելի ցանկացողաց յայտնում եմ, որ երկրորդ մասն արդէն պատրաստ է և շուտով կը յանձնուի տպագրութեան, որով և միջասեան ուսումնարանի թուաբանական ուսման ամփոփ շրջանը կազմած կը լինինք։

Գրիգորիս Երզնկեան

ՎՐԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ. յայտնելով հայոց պարբերական թերթերի խմբագրութիւններին և հայ գրքերի հրատարակիչներին, որ ներկայ տարւայ հոկտեմբերի 1-ից ընկերութիւնը ընդունելու է Աղէքսանդրեան այգում գտնուող իւր սեպհական գրախանութում վաճառելու համար հայերէն հրատարակութիւններ, ուստի խնդրում է ցանկացողներին ուղարկել յիշեալ գրախանութ իրանց գրքերն ու պարբերական հրատարակութիւնները։ Պայմանների մասին տեղեկանալ գրախանութի կառավարչից։

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Թիֆլիզի կենտրոնական գրավաճառանոցումը՝ Եղիշէ պատմութիւն Վարդանի և հայոց պատերազմի, թարգ. Ղ. Ղուկասեանցի, գինն է 60կ., նոյն տեղը վաճառւում են Ա. Արասխանեանց, Արևելեան հին ազգերի պատմութիւնը, գինն է 1 ռ.
Վ. Փափազեանց Գինեգործի աղջիկը (Թիւրքահայոց կեանքից), գինն է 15 կ.։
Աղանեան Գ. ք. ծոցի օրացոյց 1892 թ. գինն է 15 է., գումարով գնողներին սովորական զիջումն է լինում։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ԿԱՐՆՈՅ ԳԱՂԹԸ
պատմական տեսութիւն
Գիւտ քահ. Աղանեանց
(Արտատպած «Արձագանք» շաբաթաթերթից)
ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԷԿ։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ Ի ՄԻՋԻ ԱՅԼՈՑ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ.—

	Ռ.	Կ.
ԷԳԳՐԵՆ-ԼԷՖԼԷՐ՝ Մրցումն հասարակութեան հետ. գ.	—	40
ՄԱԳԱԹԵԱՆ՝ Կրթ-կրթ, վող. 1 արարուածով. գ.	—	25
ՇԷՔՍՊԻՐ՝ Ջուր տեղը մեծ աղմուկ. գ.	—	50
ՈՒԻԴԱ՝ Յեզ, վէպ. գ.	—	80
ՊԱՐՈՆԵԱՆ՝ Մեծապատիւ մուրացկանները. գ.	—	40
«Տարեցոյց և Գուշակութիւնք Խիկարի 1892 թ. գ.	—	10
ՌՕԶԵՆՀԱՅՆ՝ Նաւի փոքրաւորը. գ.	—	15
ՍԵԳՐԱԿԵԱՆ ԱՐԻՍՏ. ԵՊԻՍԿ.՝ Ամուսնական խնդիրներ. գ.	1	—
ՍՊԻՐԻ՝ Ռուբէնց Յովսէփ. գ.	—	15

(1—1)

ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐ ՏՊՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
Եւրոպական յայտնի կին գրող
ԵՕՀԱՆՆԱ ՍՊԻՐԻԻ
I. Վարդ—Բէսլին . . . . . գինն է 10 կոպէկ։
II. Ռուբէնց Յովսէփ . . . . . գինն է 15 կոպէկ։
Մանկական ընթերցանութեան գրքոյկները. երկուսն էլ գերմաներէնից թարգմանել է Ի. Յ.
Ծախւում են կենտրոնական գրավաճառանոցում։

ՏԱՆՏԻԿԻՆ ԵՒ ԽՈՀԱՆՈՑ
ԵՐԿՈՒ ՄԱՍԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԳԻՐՔԸ
ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
400-ի չափ տեղական և եւրոպական՝ աժան, համեղ և անվնաս կերակուրներ պատրաստելու եղանակ։
ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ
200-ից աւելի տնտեսական գիտելիք՝ քաղցրաւենիք. թթուեղէն. պտուղների, բանջարեղէնի և կանաչեղէնի պահպանելը և չորացնելը. կաթնատնտեսութիւն և զանազան գիտելիք։
Կազմեց Յ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՏԱՄԵԱՆՑ.
ԳԻՆՆ Է 1 Ռ. 50 Կ.
Վաճառվում է բոլոր յայտնի գրավաճառանոցներում և Մարտիրոսեանի տպարանում։

Լոյս տեսաւ և ապահոված բանդերօլով ուղարկուեց բոլոր բաժանորդներին
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆԻ
Առաջին հատորի ԱՌԱՋԻՆ ՏԵՏՐԱԿԸ։ Բովանդակութիւն։—Ազդ.—Յառաջաբան.—Միկրօբներ.—Դէզինֆէկցիական միջոցներ և նրանց գործածութեան եղանակը.—Սրընթաց վարակիչ կարմրախտներ։ 1) Քութէշ (скарлатина). 2) Կարմրուկ (корь). 3) Կեղծ կարմրուկ (краснуха). 4) Ծաղիկ (оспа). 5) Ծաղկի պատուաստումը (оспопрививаніе). 6) Ջրծաղիկ (вѣтряная оспа). 7) Քութէշ, կարմրուկ ու ծաղիկ հիւանդութիւնների գլխաւոր որոշիչ յատկութիւնները. 8) Կարմիր քամի (рожа). 9) Բծաւոր տիֆ (сыпной тифъ)։
Առաջին տետրակի գինն է 70 կոպ. ամենայն տեղ։ Մի օրինակ պահանջողները փողի փոխարէն կարող են ուղարկել երեսուն և հինգ հատ երկու կոպէկանոց մարկա։
«Հանրամատչելի բժշկարանը» կըհրատարակուի երկու հատորով, իւրաքանչիւր հատորը բաղկացած կլինի 22—23 տպագրական թերթից (44 տող իւրաքանչիւր երեսում $6^1/_2$ կվադրատ տողերի երկարութիւնը № 10 տառով)։
Բաժանորդագրութիւնը շարունակվում է. 45 թերթից 720 երեսից բաղկացած երկու հատորի գինը ԵՐԵՔ ռուբլի է։ Մեր բաժանորդները հրատարակութիւնը կըստանան մաս-մաս 5—8 թերթ իւրաքանչիւր տետրակում։
Առանձին տետրակները կըվաճառուեն թերթը 10—15 կոպ. հաշուելով։
Մեր հասցէն. Въ гор. Тифлисъ, Доктору Медицины Григорію Никитичу Теръ-Григорьянцъ, Саперная улица, № 7.
Բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեանց (Թիֆլիսեցի)։
5—3

ՍՏԱՑՈՒԵԼ ԵՒ ՎԱՃԱՌՒՈՒՄ Է
ԼՈՒՍԱԳԻՄԻՆ
ՎԷՊԸ
Գինը 1 ռուբ. է. ճանապարհածախքով 1 ռ. 20 կ.
ԱՉՈՆ ՄԱՐԱՆ . . . . 3 կ.
ՓՈՔՐԻԿ ԼՐՏԵՍ . . . . 2 կ.
ԳԱՐԻԲԱԼԴԻ . . . . 10 կ.
Հայերէն-Ռուսերէն բառարան—ճանապարհածախքով. 2 ր. . կ.
Պահեստը գտնւում է պ. Տէր-Սարգսեանցի խանութումը Գվարցովայա փողոցի վրայ։ Թիֆլիզի գրավաճառները և գումարով առնողները ստանում են 15% զիջում, օտարաքաղաքացի –20% զիջում։ Ճանապարհածախսը գումարով գնողների վրայ է։ (2—2)

Ներկայացումն 9 — Բաժանորդագրութիւնից դուրս
ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ
ԹԻՖԼԻԶ
ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ
Հայ դերասանական մշտական խումբը ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ (Նախկին Արծրունու) կըներկայացնէ՝
ՓԱՐԻԶՈՒ ԱՂՔԱՏՆԵՐ
Դրամա. 5 գործ., և յառաջաբանով, թարգ. ֆրանսերէնից։
ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ
Յառաջաբանի և առաջին արարուածի միջև անցնում է 15 տարի։
Մասնակցողները. տ. տ. Սիրանոյշ, Զաբել, Մելիքեան, Փառանձեմ. օր. օր. Վարդուհի, Ասլամազեան, պ. պ. Թուրեան, Պետրոսեան, Տէր-Դաւթեան, Աբէլեան, Արմէնեան, Արաքսեան, Աբրահամեան, Վրոյր, Պարոն-Սարգսեան, Յարութիւնեան և Մամիկոնեան։
Ներկայացման սկզբին ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ ԵՒ ԻՒՐ ՕԳՈՍՏԱՓԱՌ ԸՆՏԱՆԻՔԻ սպառնող վտանգից հրաշալի ազատութեան առթիւ ամբողջ դերասանական խումբը կ'երգէ «ՏԷՐ ՊԱՀԵԱ ԶԿԱՅՍՐՆ ՄԵՐ»։
ՍԿԻԶԲՆ Է 8 ԺԱՄԻՆ
Տեղերի գինը սովորական է։
Տոմսակները վաճառվում են թատրոնի կասսայում։

ԱՄՍՈՅՍ ՎԵՐՋԻՆ ԼՈՅՍ ԿԸՏԵՍՆԻ ԻՄ՝
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ
հարուստ ժամանակագրութեամբ։
(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)
Պ. պ. վաճառականները հրաւիրվում են վաղօրօք յայտնել իրանց պահանջները։
Գինն է 75 կոպէկ։
Մեծ քանակութեամբ գնողին որոշեալ զեղջ։
Գիւտ քահ. Աղանեանց։

50% ԶԻՋՈՒՄՈՎ
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
Պ. ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Տեկանց հայերգ.	»	60	» —30 »
2) Սիլլիկ (Ռափ. Պատկանեան)—Նոր—Նախիջևանի պատմութիւնը	»	50	» —25 »
3) Նոյնը—Տիկին և Նաժիշտ վէպիկ	»	30	» —15 »
4) Շիլլեր—Դոն-Կարլոս թարգմ. Գ. Բարխ.	»	1 ռ.	—50 »
5) » Օրլէանի կոյսը »	»	60	» —30 »
6) Լեսսինգ—Նաթան իմաստուն »	»	60	» —30 »
7) Խորենացի և Հայոց հին վէպերը »	»	60	» —30 »
8) Բժ. Բաբայեան—Առողջապահութիւն	»	40	» —20 »

Դիմել «Արձագանք»-ի խմբագրութեան կամ կենտրոնական գրավաճառանոցին։ Նոյն տեղ ծախվում են՝
«Փորձ» ամսագրի բոլոր համարները 25 ռուբլի
Պ. Համբարձում Էնֆիաճեանցից ձեռք բերած «Կրունկ Հայոց Աշխարհի» բոլոր համարները 6 »

(4—4)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
ԹԻՖԼԻԶԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻ
ց1-ն Հոկտեմբերի 1891

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիզում		Բաք. և Բաթ. բաժնում.		Ընդամենը	
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	222,579	38	128,965	46	351,544	84
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկայի բաժնում	563,781	68	131,000	—	694,781	68
3. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստոր.	2,522,970	50	1,121,666	84	3,644,637	34
4. Զեղչումն տոկոսաբեր թղ., կտրոնների և այլն.	17,998	01	6,313	98	24,312	02
5. Փոխատուութիւն գրաւականով՝						
ա) Պետութ. ապահ. տոկոսաբեր թղթերի.	1,136,010	56	456,587	—	1,601,597	56
բ) " ոչ " " "	207,803	—	12,010	—	219,813	—
գ) ապրանքների	—	—	51,029	—	51,029	—
դ) Ոսկւոյ և արծաթի	—	—	1,970	01	1,970	01
6. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր	379,053	84	78,050	37	457,104	21
7. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր	105,780	82	115	08	105,859	90
8. Թղթակիցներ՝						
ա) Նոցա հաշիւը (Loro)	7,471,343	79	—	—	7,471,343	79
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	6,517,202	39	—	—	6,517,202	39
9. Բաժինների հաշիւը կենտրոնական վարչութեան հետ	600,197	59	—	—	600,197	59
Կենտրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	—	—	162,153	19	162,153	19
10. Բողոքուած մուրհակներ	20,093	35	1,000	—	21,093	35
11. Պայմանաժամն անցուցած փոխատուութիւն.	16,481	—	13,685	—	30,166	—
12. Ընթացիկ ծախսեր	39,577	02	21,547	89	61,124	91
13. Կահկարասիք և սկզբնական ծախսեր	2,761	94	3,314	50	6,076	44
14. Յետ ստացուելիք ծախսեր	9,612	95	4,464	85	14,077	80
Ր. Ա.	19,833,247	85	2,202,873	17	22,036,121	02

ՊԱՐՏՔ	Թիֆլիզում		Բաք. և Բաթ. բաժնում.		Ընդամենը	
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000	—	—	—	1,000,000	—
2. Պահեստի դրամագլուխ	191,665	21	—	—	191,665	21
3. Դրամական աւանդներ՝						
ա) Պայմանաժամով	2,708,107	—	434,264	—	3,142,371	—
բ) ց'Պահանջ	391,978	—	34,880	—	426,858	—
գ) Ընթացիկ հաշւում. հասարակ	1,065,077	17	877,282	68	1,942,359	35
դ) " " պայմանաւոր.	—	—	117,271	81	117,271	81
4. Թղթակիցներ՝						
ա) Նոցա հաշիւը (Loro)	7,424,381	06	—	—	7,424,381	06
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	6,635,688	64	—	—	6,635,688	64
5. Բաժինների հաշիւը կենտրոնական վարչութեան հետ	—	—	591,459	98	591,459	98
Կենտրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	90,819	30	—	—	90,819	30
6. Բանկայի բաժնետոմսերի անվճար կտրոնների բաշխը	7,900	60	—	—	7,900	60
7. Չվճարուած տոկոսներ աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութիւնների	91,524	50	36,604	51	128,129	01
8. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	161,269	19	90,042	05	251,311	96
9. Փոխանցիկ գումարներ	64,836	46	21,068	14	85,904	60
Ր. Ա.	19,833,247	85	2,202,873	17	22,036,121	02

Дозволено цензурою. Тифлисъ, 12 октября 1891 года. Տպարան Յ. Մարտիրոսեանցի։ Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул. д. № 1—2